

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սուրեն Գագիկի Թադևոսյանի «Էթնո-կրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում» ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության համակարգի ամենաբարդ գործոններից մեկի՝ Իրան-Ադրբեջան փոխգործակցության համալիր ուսումնասիրությանը:

Թեմայի արդիականությունը ակներև է: 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում ձևավորված նոր ռազմաքաղաքական իրողությունների, ուժային կենտրոնների վերադասավորման, Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի խորացման և տարածաշրջանային հաղորդակցային ուղիների շուրջ ծավալվող սուր մրցակցության պայմաններում Իրան-Ադրբեջան հարաբերությունների խորքային պատճառների վերլուծությունը ձեռք է բերել ոչ միայն տեսական, այլև առաջնային գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության անմիջական մարտահրավերներով: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, Իրան-Ադրբեջան լարվածության սրումը կամ հնարավոր իրավիճակային մերձեցումը կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Հայաստանի անվտանգային ճարտարապետության, տրանսպորտային կապուղիների և արտաքին սպառնալիքներին դիմակայելու ռազմավարության վրա:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է մի քանի ուղղություններով: Այն հայաստանյան քաղաքագիտական գրականության մեջ Իրան-Ադրբեջան հարաբերությունների ամբողջ հետխորհրդային շրջափուլն (1991-

2025 թթ.) ընդգրկող առաջին համակարգային ուսումնասիրություններից է, որը հիմնված է միջազգային հարաբերությունների դերերի տեսության հայեցակարգային գործիքակազմի վրա: Հեղինակը հաջողությամբ կիրառել է կոնստրուկտիվիստական այս մոտեցումը՝ դուրս գալով զուտ աշխարհաքաղաքական վերլուծության շրջանակներից և կենտրոնանալով ինքնության, ընկալումների և սոցիալական փոխազդեցության դերի վրա:

Կարելի է արձանագրել, որ ատենախոսությունում լիարժեք կատարվել են հետազոտության նպատակից բխող խնդիրները, ինչը հեղինակին թույլ է տվել ձևակերպել կարևոր գիտատեսական և կիրառական նշանակություն ունեցող եզրահանգումներ:

Ատենախոսությունն առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների շարադրման տրամաբանական հետևողականությամբ և գիտական հիմնավորվածությամբ: Աշխատանքը շարադրված է գիտական, գրագետ լեզվով, ունի հստակ կառուցվածք և հանդիսանում է հեղինակային ինքնուրույն, ամբողջական հետազոտություն: Ուսումնասիրելով ծավալուն և բազմալեզու գրականություն՝ ատենախոսը կարողացել է բազմակողմանիորեն վերլուծել Իրան-Ադրբեջան հարաբերությունները պայմանավորող գործոնները:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Առաջին գլխում մանրամասն քննարկվում է աշխատանքի տեսահայեցակարգային հիմքը՝ միջազգային հարաբերությունների դերերի տեսությունը: Հեղինակը հիմնավորում է դրա կիրառելիությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում՝ սահմանելով առանցքային հասկացությունները:

Երկրորդ գլուխը նվիրված է Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքական ինքնության և հայեցակարգերի ձևավորմանն ու զարգացման: Վերլուծվում են 1979թ. հեղափոխության գաղափարական հիմքերը,

հետհեղափոխական շրջանի փոխակերպումները, ինչպես նաև «առավելագույն ճնշման» պայմաններում «դեպի Արևելք» հայեցակարգի ամրապնդումը:

Երրորդ գլխում քննության է ենթարկվում հետխորհրդային Ադրբեջանի ազգային ինքնության կառուցման և արտաքին քաղաքական մոտեցումների ձևավորման գործընթացը: Հեղինակը վեր է հանում ադրբեջանական ինքնության գաղափարական հիմքերը, վերլուծում է Հ. Ալիևի բազմավեկտոր քաղաքականությունը, էներգետիկ գործոնի ազդեցությունը և 2020թ. պատերազմից հետո Ադրբեջանի արտաքին քաղաքականության կոշտացումն ու աճող հավակնությունները:

Չորրորդ գլուխը կենտրոնանում է Իրան-Ադրբեջան հակասությունների երեք հիմնական՝ կրոնագաղափարական, էթնոքաղաքական («Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիր) և աշխարհաքաղաքական-համակարգային չափումների վրա՝ ցույց տալով դրանց փոխազդեցությունն ու համակցված ազդեցությունը երկկողմ հարաբերություններում ձևավորված լարվածության վրա:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացված են հիմնավորված եզրահանգումներ և գործնական առաջարկներ:

Ատենախոսությունը, բնականաբար, զերծ չէ որոշ թերություններից, բացթողումներից և վիճահարույց դրույթներից: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

1. Հեղինակը ամբողջական գլխով ներկայացրել է ատենախոսության տեսամեթոդական շրջանակը, ինչը, իմ կարծիքով, կարող էր մասամբ կրճատվել: Դրա որոշ հատվածներ կարելի էր ներառել ներածության մեջ՝ պահպանելով տեսություն-պրակտիկա ընդհանուր հավասարակշռությունը:

2. Ատենախոսության առանցքում, թեմայի բնույթից ելնելով, առավելապես կատարվել է Իրան-Ադրբեջան հարաբերություններում առկա խոչընդոտների գիտավերլուծական գնահատում: Թեև աշխատանքում անդրադարձ առկա է նաև համագործակցության ասպեկտներին (օրինակ՝ «Հյուսիս-Հարավ»

միջանցք), ցանկալի կլիներ, որ հեղինակն ավելի մանրամասն վերլուծեր դրանք՝ մասնավորապես տնտեսական փոխգործակցության տեսանկյունից:

3. Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ երկրորդ գլխում համեմատաբար մեծ տեղ է հատկացվել գաղափարախոսական և պատմա-քաղաքական գործոններին, մինչդեռ ներքին սոցիալ-տնտեսական ճնշումների, էլիտայի պառակտումների կամ ժողովրդագրական փոփոխությունների ազդեցությունը ևս կարող էր հարստացնել աշխատանքի տեսագործնական արժեքայնությունը:

4. Աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակը երբեմն առավել մանրամասն է վերլուծում խնդրո առարկա պետություններում ազգային ինքնության կերտման պատմական դրվագները: Մինչդեռ անհրաժեշտ էր դրանք ներկայացնել ծանոթագրությունների տեսքով և հնարավորինս կարևորել վերջին տարիների զարգացումներն այդ գործընթացում:

5. Հեղինակն անդրադառնում է Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա ազդող տարածաշրջանային գործոններին: Այս համատեքստում ցանկալի կլիներ անդրադառնալ այն հանգամանքին, թե ինչպես են Իրան-Ադրբեջան հակասությունները տեղավորվում միջազգային հարաբերությունների լայն, բազմաբևեռ համակարգում՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Արևմուտքի մրցակցության տեսանկյունից:

6. Չորրորդ գլխի առաջին ենթագլուխը հիմնականում կենտրոնանում է Իրանի շիայական ազդեցության փորձերի և Ադրբեջանի աշխարհիկ հակազդեցության վրա: Կարծում եմ՝ որոշակիորեն ստվերում է մնացել Ադրբեջանի կողմից սուննիական գործոնի օգտագործումը՝ որպես Իրանի շիայական ազդեցության գաղափարական հակակշիռ: Ադրբեջանը գիտակցաբար սերտացնում է հարաբերությունները սուննիական աշխարհի առաջատարների (Թուրքիա, Պակիստան, Սաուդյան Արաբիա) հետ ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև կրոնա-գաղափարական նկատառումներով:

Եզրակացություն

Նշված դիտողություններն ու առաջարկները հիմնականում արվում են գիտական քննարկումը խորացնելու նպատակով և չեն նսեմացնում հեղինակի կատարված ծավալուն աշխատանքի արժեքն ու նշանակությունը:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, շարադրանքի տրամաբանությունն ու ներքին ամբողջականությունը, վերլուծության խորությունը և ձևակերպված արժեքավոր եզրահանգումները՝ գտնում եմ, որ **Սուրեն Գագիկի Թադևոսյանի՝ «Էթնոկրոնական գործոնները Իրան-Ադրբեջան հարաբերությունների տարածաշրջանային զարգացման գործընթացում»** վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 մասնագիտությամբ գիտական աստիճան հայցելու համար ՀՀ ԲԿԳԿ սահմանած պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



S.S. Քոչարյան

Պաշտոնական ընդդիմախոս պրոֆեսոր **Տիգրան Քոչարյանի** ստորագրության իսկությունը հաստատում եմ

**Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ**



Մ.Վ. Հովհաննիսյան

07.11.25

